



# Դանիել Վարուժան

## Գեղեցկության արձանին

Կուգեմ ըլլայ քու մարմարիո՛նդ պեղուած  
Ոլիմպոսի ամենէն խոր արգանդէն.  
Եւ իմ մութճիս տակ ըզգենու հրեղէն  
Միս մը կնոշ, լոյսով, տենդով սրարբած:

Աշքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուգի՝  
Յաւերժին մէջ անմահացած ըզգայ զինք.  
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք  
Դաշնակութիւն մ'որ կենսահիփը յուզի:

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգւոյն պէս,  
Եւ հեթանոս այդ մերկութեանդ ներքև  
Տառապի՛ մարդն, ու չկրնայ դաշիլ քեզ:

Թէ հարկ ըլլայ զոհ մը ընել քեզ պարզև,  
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթուիլ՝  
Որպէսզի կուճդ ըմպէ արեանս հոսկ կաթիլ: